ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

ԱՐԱՐԱՏ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ՝ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության հարգելի՛ աշխատակիցներ, սիրելի՛ փրկարարներ և վետերաններ, սրտանց շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի՝ Փրկարար ծառայողի օրվա կապակցությամբ: Ձեր անձնազոհ և մարդասիրական աշխատանքով բազում անգամներ ապացուցել եք , որ դուք ձեր գործի իսկական նվիրյալներն եք: Ուստի ձեր ամենօրյա աշխատանքն մեր կողմից արժանի է խորին հարգանքի:

Խորին շնորհակալություն եմ հայտնում հատկապես ՀՀ ՆԳՆ Արարատի ՄՓՎ Արարատի հրշեջ փրկարարական ջոկատի ողջ անձնակազմին՝ Արարատ համայնքում անհրաժեշտության դեպքում իրականացվող մարդասիրական մեծ աշխատանքի և մասնագիտական բարձր հմտությունների համար:

ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության հարգելի՛ աշխատողներ, կրկին շնորհավորում եմ ձեզ մասնագիտական այս կարևոր տոնի առթիվ՝ մաղթելով ձեզ քաջառողջություն, խաղաղ ծառայություն և մասնագիտական նորանոր ձեռքբերումներ:

Շնորհավո՛ր տոնդ, փրկարար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ